# ՀՐԱՏԱՐԱԿՉԻՑ

Րոպէական ազդեցութեան տակ չենք վճռել մի այսպիսի հանդիսի հրատարակութեան ձեռնամուխ լինել, ոչ էլ պատահմամբ ենք ընտրել այս. մեր ճանաչողները գիտեն թէ որքան ժամանակից ի վեր փայփայել ենք այս միտքը և որքան արգելքների ենք յաղթել փոքր ի շատէ նախապատրաստուելու այս գործի համար։ Այսօր մենք հանդէս ենք գալիս ոչ թէ միայն մեր ուժի վրայ վստահացած, այլ ազգի ինքնաճանաչութեան զգացման։ Թերթերի մէջ սփռուած և առանձին լոյս տեսնող ազգագրական յօդուածներն արդէն ապացուցանում են, որ Հայոց ազգն էլ վերջապէս զարթել է խոր քնից և ցանկանում է կատարել գիտութեան ամենիմաստ խօսքը «Ծանիր զքեզ». Նա կամենում է ճանաչել իրեն և իւր ազգային յատկութիւնների վրայ հիմնել ազգային զարգացումը։ Մեր այս գործն այդ զգացման արդիւնքն է և մեր կոչումը՝ այդ գործին գիտական ուղղութիւն տալ և աշխատողների մէջ միութիւն հաստատել։ Մենք չենք խոստանում հրաշքներ գործել, որովհետև այս ձեռնարկութիւնն անհատական գործ չէ և սոսկ մինի տաղանդից չէ կախուած. ազգի ուսումնասիրութիւնն ամբողջ առաջաւոր դասակարգի գործն է. երբ ժողովուրդը սիրով կը բանայ իւր սիրտն ազգագրի առաջ, երբ վերջինս կը լուսանկարէ նրան իւր բոլոր ճշտութեամբ, երբ կանխակալ և կուսակցական գաղափարները չեն պղտորիլ ոչ ժողովրդի և ոչ հետազօտողների միտքը, մեր հանդէսը կը դառնայ ժողովրդական կեանքի մի ճշմարիտ հայելի, մի շտեմարան, որտեղից վիպասանն իւր նիւթը կը վերցնէ ազգային վէպ ստեղծելու, լեզուաբանը՝ բառեր և ոճեր կը քաղէ՝ ազգային լեզուն հարստացնելու և օտարանալուց ազատելու, հրապարակախօսն և հոգևորականն ազգի վէրքերը կը նկատեն, նրանց դարմանումը քարոզելու, բժիշկը՝ նրա ցաւերը կը տեսնէ՝ սպեղանիներ հասցնելու, ուսուցիչը մանկան ընտանեկան կեանքը կ՚ըմբռնէ՝ այն բարեփոխելու, իսկ գիտնականը՝ իւր նիւթը կը վերցնէ գծելու

էվոլիւսիօնի օրէնքները։ Ո՛րպէս այս ձեռնարկութիւնը ծառայում է ինչպէս ազգութեան, այնպէս և՝ գիտութեան. առանց հասարակական դեր կատարելու՝ այս գործը հասարակական ինքնուրոյն կեանքի հիմունքն է ձգում և ընդհանուր գիտութեան նպաստում։

Դէհ ուրեմն, հայ ժողովուրդ, բաց սիրով մեր առաջ քո սիրտըն ու հոգին, թո՛ղ որ մենք թափանցենք քո ներքին կեանքի մէջ և պատկերացնենք քեզ ինչպէս որ ես. քո ախտերից նկարն անգամ կարող է բարիք բերել քեզ։ Նա դեռ քանի քաղաքակրթութեան հուրը լափում է անցեալի բոլոր յիշատակներն և մենք պէտք է շտապենք ազատելու ինչ որ դեռ մնացել է, և դեռ քանի մենք մասնագէտ ազգագրագէտներ չունինք, հրաւէր ենք կարդում Հայոց գրականութեան Մշակներից և Ձեզ, Հայ Ուսուցչուհիներ և Ուսուցիչներ, որ սիրով յանձն էք առել Հայ ժողովրդի կրթութեան գործը, Ձեր իսկ գործի յաջողութեան և ազգային ինքնուրոյնութիւնն պահպանելու փափագով՝ իւրաքանչիւրդ ձեր միջավայրը ներկայացնելու նեղութիւնն յանձն առէք։ Մենք կ'առաջնորդենք Ձեզ նախ ծրագիրներ տալով և երկրորդ՝ մեր հանդիսի երկրորդ մասում մարդաբանական յօդուածներ տպելով՝ կը ծանօթացնենք Ձեզ. թէ ինչի՞ վերայ աւելի ուշք պիտի դարձնէք և ինչպէս պիտի հաւաքէք։ Մեր կոչումն այժմ միայն նիւթեր հաւաքելն է, որովհետև դրանց պակասութեան պատճառով՝ գիտական ուսումնասիրութիւններն անհնարին են, և մէկ էլ դրանց համար ժամանակ չի պակասիլ։ Մենք կը կրենք քարերը և երանի՜ նրան, ով կը գայ այդ քարերով ազգային ինքնուրոյնութեան շէնքը կառուցանելու և համամարդկային էվոլիւսիօնի օրէնքները գծելու։

Ե. Լալայեան.